

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԼԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Церк. Вѣстникъ-ում կարգում ենք. Հոգևորականների թեմական ժողովի որոշմամբ Կիևի Թեմական տեղեկատուի մէջ արտատպուած է մի յօդուած հովուական ընկերական դատի և դատաստանի մասին: Յօդուածի հեղինակ Պետրեակով քահանան լուսաբանում է այդ ընկերական դատաստանի կենսական նշանակութիւնը, որը կարող էր քննել այն բոլոր յանցանքները, որոնք այս կամ այն ձևով ձգուած են հոգևորականութեան արժանիքը:

Պատուի դատարանի նպատակը հոգևորականներին մէջ կայանում է նրանում, որ նրանք փոխադարձաբար աշխատեն պահել իրար բարոյական այն ցանկալի բարձրութեան վրայ, որը պահանջում է հովիւներից. նա պէտք է պահպանի հոգևորականների բարի անունն ու արժանիքը, և հոգևորականներին կիանքից պէտք է հեռացնի այն բոլորը, ինչ որ չի համապատասխանում հովուական պաշտօնի բարձր պահանջներին: Այդ ձևով հոգևորականների պատուի դատարանը առաւել բարոյական հիմնարկութիւն է, քան իրաւաբանական և ոչ մի առնչութիւն չունի նեղ դատակարգային պատուի դատարանի հետ, ինչպէս այդ ղինորականներին շրջանումն է: Հովուական այդ դատարանի կարիքը կերելի հասունացել է, որ արդէն թեմական խորհրդի քննութեան նիւթ է դարձել: Պէտք է ցանկալ, որ այդ գործը իրականութիւն ստանայ և ճանաչուի հոգևոր իշխանութեան կողմից:

Հայր Պետրեակովը նկատում է, որ հովուական պատուի ասեանք անպայման կը բարձրացնի հոգևորականութեան ինքնաճանաչութիւնը, եռանդ կը ներշնչի նրան հովուական գործունէութեան մէջ և խստապահանջ կը դարձնի ոչ միայն ղիմացիներին, այլ և իրենց վերաբերութեամբ: Անձնական արժանապատուութիւնը կը գնահատուի որպէս ընդհանուրի համար թանկագին և ոչ թէ անձնական արժէք ունեցող, և առաւել սակաւ կը լուրի «խրճիթս հեռու է» (ինչ իմ բանս է) նախադասութիւնը: Միաբանութեան անդամների վրայ պատուի դատարանը սթափեցնող ազդեցութիւն կունենար և կայնուացէնք

նանց: Երբ մէկը գիտէ, որ իւր վարմունքը և գործողութիւնը դիտողութեան է առնւում, ընտանաբար աւելի զգոյշ կը լինի և առաւել ուշադիր դէպի իւր գործունէութիւնը, վարմունքը: Ամօթխածութեան զգացմունքը շատ հեռու կը պահի սխալներէ, երբ Իրանը կիմանան, որ այդ սխալները կարող են ամբողջ շրջանի քննութեան նիւթ դառնալ, քննուել իրենց պաշտօնակիցների և աշխատակիցների կողմից:

Թեմական իշխանութեանը մ'նում է նախաձեռնող հանդիսանալ այդ գեղեցիկ գործի, քաջալերել այդ նպատակայարմար առաջարկութիւնը և ժողովանակ կոնսիստորիայի շինովնիկական ձևական դատաստանի, նրան յանձնել հոգևորականներին վերաբերեալ գործերից մեծ մասի քննութիւնը:

Նախարարական խորհուրդն իւր վերջին նիստերից մի'նում հարց է բարձրացրել սինօդի օրեր պրօկուրօրին նախարարական խորհրդի անդամութիւնից հանելու մասին: Այդ խնդիրը յարուցել է ինքը՝ սինօդի օրեր պրօկուրօր Ա. Դ. Օբուէնսկին, որը շատ անգամ ցոյց է տուել պրօկուրօրի նախարարական խորհրդին մասնակցելու անտեղիութիւնը: Այդ առթիւ ներկայացրած յատուկ զեկուցագրի մէջ Օբուէնսկին շեշտում է, որ օրէնքի իսկական մտքով օրեր պրօկուրօրը չի կարող նախարարական խորհրդին մասնակցել, որովհետեւ Պետրոս Ա.-ի հասկացողութեամբ օրեր պրօկուրօրը «Թագաւորի աչքն է» եկեղեցական կառավարութեան մէջ: Իսկ եկեղեցական վարչական գործերը վարում է ոչ թէ ինքը, այլ սինօդը: Համաձայն օրինաց օր. պրօկուրօրը երբէք նախարար չէ և յիշեալ գործերում երբէք նախարարական լիազօրութիւններ չունի: Հին կարգերի — Պօլեոնոսի ժամանակ, գործը օրէնքից շեղւում էր: Վերջինս հակառակ օրինաց, իւր պաշտօնին տուաւ մեծ նշանակութիւն. որովհետեւ հարց չբարձրացաւ այն մասին, թէ սինօդի օր. պրօկուրօրն իսկապէս բարձր կառավարութեան անդամ է թէ ոչ, այդ պատճառով էլ նա ահագին նշանակութիւն և ազդեցութիւն ունեցաւ կառավարական ընդհանուր գործերում: Իսկ այժմ, երբ 1905 թուի հոկտեմբերի 10-ից հաստատուած է նախարարական խորհուրդ, բարձր կառավարութեան անդամները դրութիւնը բոլորովին փոխուել է և Դումայի նիստերի բացման պատճառով հարց է ծագել. — արդեօք սինօդի օրեր պրօկուրօրը կարող է մտնել նախարարական խորհրդի կազմի մէջ: Օբուէնսկու զեկուցագրի համաձայն պատասխանը կարող է լինել միմիայն բա-

ցասական, որովհետեւ խորհրդի անդամ են այն առանձին մասերի վարիչները, որոնք կազմուած են ընդհանուր նախարարական կազմակերպութեան համաձայն, այն ինչ սինօդը երբէք այդպիսի կազմակերպութիւն չէ: Ահա այս պատճառով առաջարկուած է հանել օրեր պրօհուրօրին նախարարական խորհրդի կազմից. վերապահել նրան Դումային մասնակցելու իրաւունք եկեղեցական խնդիրները վերաբերութեամբ նոր օրէնքներ մշակելիս, գանձարանից գումարներ յատկացնելիս, պարտաւորեցնել հաշիւ ներկայացնել և պատասխանատու լինել Դումայի առաջ սինօդի կողմից այն հարցապնդումների ժամանակ, որոնք կապ ունեն պետական կառավարութեան հետ:

Այսպէս ահա նախարարական խորհուրդը ազատուած է հոմա Իգնատիևի մասնակցութիւնից, եթէ միայն նախարարական խորհրդի նոր կազմը կը ցանկայ կանգնել օրինական հողի վրայ: Դուման ցրուելու խնդիրը կարելի է փակուած համարել, որովհետեւ կառավարութիւնը վճռել է չսրել իւր յարաբերութիւնները Դումայի հետ: Պէտք է նկատել, որ բւերօկրօտիան ինքը ահագին մեծամասնութեամբ դէմ է եղել այդ բանին: Այս դէպքում նա ղեկավարուել է ոչ միայն այդպիսի քայլի վտանգաւորութեամբ, այլ և այն բանով, որ Դուման ցրուելուց յետոյ պետական խորհուրդն էլ գործելու իրաւունք չէր ունենալ, որովհետեւ ապրիլի 27-ից նա կորցնում է իւր յատուկ նշանակութիւնը և առանց Դումայի ոչինչ անել չի կարող: Եթէ Դուման արձակուի, այդ դէպքում երկրի ամբողջ կառավարութիւնն իսկապէս անցնում է նախարարների ձեռքը: Ընդհանուր կարծիքով Վիտտէի համար «դա կլինէր ամենալաւ ելքը նրա խճճուած դրութիւնից»: Բայց նոր խորհուրդը կարիք չունի այդ բանին, որովհետեւ իւր նախորդների մեղքերի պատասխանատու չէ բոլորովին:

Գ. Ա. Յ. Թ. Ա. Կ. Ղ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Двадцатый Вѣкъ թերթում կարդում ենք.

Եկեղեցական բարձրաստիճան հայրերը վրդովուած ու զայլաբաց են: Պալատական դրանիկները այնքան էին շտապում «լիմնական օրէնքներ» հրատարակելու գործում, որ նրանց մէջ բաց են թողել ռուսաց կայսեր տիրող եկեղեցուն պատկանելու պարտաւորեցուցիչ յօդուածը: Բանից դուրս է գալիս, ասում